



# *upurus*

ԿՐՈՆԱԿԱՆ - ԱԱՐՈՎԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ - ՄԱՆԿԱՎԱՐ-ԺԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵԻ ՊԱՏՅՈՆԱԿԱՆ.

Ա Մ Ա Ր Գ Ի Ր

በ ፳፻፭ • ከ፩ • ሪፖርት

## सुप्रभा विष्णु

URS 1896 R.

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE: 1912. 2 b 3 b U. S. G.

• Ամի, Ելի, լամն սարաբթանի ։  
• Ասոռած իմ, Ասոռած իմ ընդեր  
թողեր պիւ։  
Մատթ. իլ. 46. Մկ. Ժե 34.

**Н**շագէս խորհրդաւոր, ինչպէս հոգեպարար  
է եկեղեցւոյ զանգակների հնչիւնը Աստ-  
ռաւածայայտնութեան զիշերուայ խորին լու-  
թեան մէջ, ինչպէս զրաւէսէ է ձմեռնային սառ-  
նամանեաց հանդէպ Տիրոջ սեղանի առաջ-  
փայլիվող կանթեզների ջերմ լցուը, ո՞ր ման-  
կական հօգի, ո՞ր սուբբ և դէպի սրբութիւն  
ձգաող միրտ չէ զգացել Ա'անուկ Աստուած-

որդու չքնաղ պատկերի անդիմագրելի հրա-  
պրյան ու ներգործութիւնը. աշխարհի իշխան-  
ներից և իմաստուններից սկսած մինչև յետին  
հովիւր իրենց կեանքի օրոշ բոպէներում պատ-  
րաստ են ծունկի խոնարհել՝ Կորա առաջ:

Խնչքա՞ն վսեմ է և գեղեցիկ այն տեսարանը, որ մեզ ներկայացնում է Երկնաւոր Արդապետին մի հրաշալի ամառնային երեկոյ Տիբերական ծովի մօտ լեռան ստորոտում նստած՝ և շուրջը կեանքի ու Շմարտութեան կարօտ հոգիների ահադին բազմութիւն։ «Ես խօսում է, և կարծես երկինք ու երկիր, լեռներն ու ծով ականջ դարձած լսում են՝ ողի

Աչջ խաղացող թռչուններն անգամ պատրաստ են մարդոց հետ բացազնել, «Ո՞ւ երբէք խօսեցաւ մարդ, որպէս այրն այն»:

Ի՞նչ խօսք, ի՞նչ երաժշտական նուագ, ի՞նչ երկնային պատգամ աւելի քաղցր հնչել կարող է մեր ականջին, աւելի մեծ երանութեան և աւելի բարձր յուսոյ աւետիք մեզ բերել՝ քան սուրբ յարութեան ողջոյնը գեղածիծածաղ գաղաճաղ գարնան նոր արշալոյս բացուելիս. «Քիմ յարեան գնծութեան ժամ է զուարժ և երկնահայեաց հոգիների համար, յաղթութեան ժամ «Քիմ յարիս բոլոր հաւատարիմ զինուորների համար. «Յետին թըշնամին խափանի՝ մահ» և զամենայն ինչ հնագանդ արար ի ներքոյ ոտից «Սորա»:

Բայց երբ մի ծանր վիշտ ինձ ձնշում է և անգարմաննելի մի կակիծ սիրտս է այրում. երբ շարութիւն ու ստութիւն զօրացած ոտքի տակ են տալիս աշքիս առաջ աղնիւն ու արդարը. երբ շուրջն ամէն կողմ խաւար է տիրում անգնդային խաւար առանց լուսոյ մի նշոյլ՝ անշուտութեան այդ ձգնաժամի մէջ Գողգոթայի խան եմ ես միայն տեսնում հորիդոնի վերայ և այդ խաչի բարձունքից անսահման սիրով և անսպատում ցաւով դէպի այս գառնալից աշխարհ նայող Փրկիչն է, որ միակ զօրաւոր, միակ բարձր, միակ սուրբն է ինձ ներկայանում՝ միակը, որի իսկութեան, արդարութեան ու ճշմարտութեան վրայ ես կասկածել չեմ կարող եթէ ամրոջ ափեզերքըն իսկ ցնորք և խարեւութիւն համարէի, որի ցաւի առաջ ամէն ցաւ չքանում է, որի սիրոյ առաջ քարէ սրտերն անգամ հալուում մաքուր և վաեմ զգացումների ընդունակ են գառնում:

«Եմի, էլի, լամա սարաքթանիւ. ո՞ր իմաստութիւն, ո՞ր հանձար այն անյատակ հոգու խոլքը թափանցել կարող է, որտեղից երբեմն այս հառաջանքը դուրս թռաւ. և դարէ դար բեռուած մնաց մարդկանց յիշողութեան մէջ. Մահուան տագնապի ներքոյ այդ հառաջանքն արձակողը նոյն Տէրն էր, որ «ատիթաթա կումի ձայնեց երբեմն Յայրոսի աղջկան,

և մեռեալլ ելաւ կանգնեց. իսկ Աւետարանի բաղմակեղութարդմանիները պահպեցին նոյնութեամբ աստուածային բարբառի այդ նուիրական հնչիւնները, որպէս զի ամէն ոք խաչակիր հաւատացեալներից լսէ այդ բարբառը նոյն սաստկութեամբ, նոյն զարհուրելի շեշտավ, որպէս եղբեմն խաչի մօտ կանգնած հաւատարիմները լսեցին:

«Սստուած իմ Սստուած իմ ընդէր թողեր զիս ու ըստ երկութիւն մի հարց է այդ միայն, բայց ո՞չ ի՞նչ կը լինէր մոայլ կասկածների մէջ խարիսխափող հաւատոյ և թերահաւատութեան մէջ մաքառող մարդկութեան վիճակը, եթէ այս անգամ ևս այդ հարցն անսպատասխան մնար, իւր պատասխանն իւր մէջ չըսվանդակիր. կատարեալ լքման և յուստհատութեան աղաղակ է այդ, և սակայն ո՞ւր պէտք է զիմէին կորուսեալ և վհատ, արհամարհեալ ու անմիմիթար հոգիներն, եթէ այդ աղաղակը մի անգամ ընդ միշտ նոյցա բոլորի կողմից արձակուած՝ բոլորի համար յուսոյ, միխթարութեան, երանութեան աղբիւր բացած ըլինէր:

Փրկիչը խաչի վերայ. ի՞նչ աւելի մեծ հարց, աւելի անլուծաննելի մի առեղջուած այս աշխարհի համար: «Եա որ ամէն հիւմնդութեանց և վերքերի բժիշկ էր հանձարեկ՝ այժմ ամենազառն տանջանքների մէջ է, և իւր վերքերի վերայ զնելու գեղ չէ զանում Անեղաւորների բարեկամն ու թշնամիների ընկերը՝ «Եա, որ հաւասար սիրով հարազատ մօրն ու ամենակատաղի թշնամուն սիրել կարող էր, պատրաստ և ընդունակ ամէնքի վիշտարն ամոքելու, ամէնքին օգնելու՝ ծայրահեղ թշնամութեան և ատելութեան առարկայ է այժմ, և ոչ ունի բարեկամ և միխթար, ամէնքը, ամէնքը թողել հեռացել են, և խաչի մօտ կանգնած մերձաւորներն անգամ «Եորացաւը հասկանալ և սփոփել չեն կարող: Կրկնենքի ու երկրի արդարադատ թագաւորը վշեայ պատկի ի զլուխն իրեւ յետին յանցաւոր առմենանարդ մահուան է մատնուած, Սստուծոյ Միհածին Արդին՝ «Իանն, որ ի ծոց Հօր»:

իրեւ ամբարիշտ ու աստուածընդդէմ դատապարտուած ու նախատուած—և Կատուծոյ անուան նախանձախնդիր քահանայապետներն ու դպիները զուլս շարժելով անցնում են խաչ մօտից և հեղնում։ «Քրիստոնոց, արքայդ Խորայէլի, իջցէ այժմ ի խաչէ այտի, զի տեսցուք և հաւատացուք զմա։» Ո՞չ, այդ սոսկալի հեղնութիւնը Վմենակալ Կատուծոյ երեսին, ո՞չ, սրբութեան ու արդարութեան այդ ծայրաշեղ անարգանքը, ո՞չ, ամէն ճշմարտութիւն մխառղ և ամէն բարի յոյս ի չիք դարձնող այդ գիւական արհամարհանքը, ինչու, ա՞չ, ինչու է չարի այս յաղթութիւնը, եթէ բարին է թագաւոր, ինչու աշխարհի մէջ այս ահազին անիրաւութիւնը, եթէ Կատուծոյ է Կորա արարիչն ու նախախնամողը։»

Ինչու, արդար Յորի ոսկերքը մաշող այդ յաւիտենական ինչուն էր, որ չին ու խտի սաղմոսերգուին մրմնջել տուաւ։ «Կատուծ իմ Կատուծ իմ նայեաց առ իս, ընդէր ժողեր զիս։ բոլոր մարդկութեան սիրտն ու միաբը կաշկանդող այդ մրմունջն էր կրկին, որ խաչի վերայ բեեռած Փրկիչն արձակեց, և «Կորա ահեղասաստ ձայնից հին տաճարի վարագորը վերից ի վայր սպատառեցաւ, աստուածային սրբութիւնները մարդոց սրտի ու մտքի առաջ ծածկող առագաստը վերացաւ՝ և «մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառմն Տեառն իրեւ ընդ հայելի տեսեալ, ի նոյն պատկեր նորոգիմք՝ փառաց ի փառու։»

Գողգոթայի վերայ փայլող լուսեղին խաչն է այդ հայելին, և երբ տեսնում եմ խաչապաշտ մարդիկ իրրեւ չնշին որդ ոսքի տակ տուած, տարապարտ տեղը մի խեղճ ժողովուրդ խաչահան եղած՝ լսում եմ արհամարհողների հեղնութիւնը։ «Յուսացաւ ի Տէր՝ և փրկեսցէ զնա», և ամբողջ աշխարհը դժոխք է ինձ թուում, անարդարութեան ու ստորկրերի արիւն լեզի ծով՝ բաւական է, որ հայեացքս դարձնեմ՝ գէպի Գողգոթա, գէպի անմահական քնով աչքերը փակած իմ Փրկիչը, և առժաման խաղաղում է իմ վրդոված հոգին, փարատուում են թերահաւատութեան

և անցուսութեան մուայլ կասկածները՝ և սրբազնոն ոգեպութեամբ լեցուած ընդպրկում եմ ես փրկութեան խաչն ու աներկիւղ կեանքի ու կռուի ասպարէզ ենում։» Ո՞ւ է, մահ, յաղթութիւն քո. նոր է, դժոխք, խայթոցքն քո։

Ա. Ա.



ՀԱՅԱՍՏԱՆ ԶՈՐԱԿԹԻՒԽՆ ՈՒ ԱՐԳԻՒԽՆՔԸ.

«Որդի մարդոյ եկեալ, զոսմից արդեօք հաւասար յերկրի ։» Դուկ, ԺՀ 8.

Արգեօք, հայ ժողովուրդ, եթէ կրկին անգամ մեր աշխարհը գար Մարդոյ որդին, Աստուծոյ Որդին՝ աշխարհի Փրկիչը, գար իշնէր այն սուրբ տեղերը, ուր նա երբեմն շրջել և քարոզել է, ուր ուխտ են գնում նորա ու գերեզմանին. գնար այն աշխարհակեդրոն քաղաքը, ուր ս. Պետրոսի աթոռան է գրած և որի գահակալը Քրիստոսի փոխանորդ, Քրիստոնէութեան գլուխ է իրեն համարում. անցնէր այն քաղաքակրթեալ երկրներից, ուր հազարաւոր հոյակապ տաճարներ, կրթական ու բարեգործական հաստատութիւններ կան կառուցած Քըրիստոսի անուամբ, ուր Խաչի պաշտօնն է թագաւորում գեր. գար վերջապէս նաև այս անշուք յարկի տակ մանէր՝ հաւատ, միշտ հաւատ որոնելով մեղնից ամէն մէկի առաջ կանգնէր ու հարց տար. Անին արգեօք հաւատ, հաւատով ներս եկար այս տեղ, հաւատով խաչ հանեցիր, հաւատով սպասում ես Աստուծոյ Խօսքը լսելու.՝ ի՞նչ էր կարծում որ պէտք է տեսնէր ու լսէր նա. Հաւատ պէտք է գտնէր, նայեցէք մէկ ձեր ներսը, նայեցէք շնորջը, հեռուն, հեռուն. այս օրերը նախատեսելով չէ արգեօք, որ նա այնպիսի տիսուր ձայնով հարցնում էր. «Որդի Մարդոյ եկեալ, գտանիցէ արգեօք հաւատ յերկրի», եւ գիտէք ինչ առթիւ է ասուած այդ Խօսքը. այսօք ս. սեղանի բեմից կարգացուեցաւ այն իւր բացատրութեամբ հանգերձ. բայց ովք է լսում, թէ ինչ կարգացուեցաւ. ս. սեղանի բեմից։

Մի քաղաքում ասած է, մի դատաւոր կար, Աստուծուց չէր վախենում։ մարդկանցից էլ չէր ամաչում. Մի այրի կին ևս կար նոյն քաղաքում. գալիս ամէն օր կտրում էր նորա դուռը և դատաստան խնդրում. Տես իմ դատը, կանչում էր, ուղիղ դատաստան կտրիր իմ ու իմ թըշնամու, իմ տունը քանդողի, իմ խեղճ օրբերի բեր-